ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2025թվականի N 290-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի ԹԻՎ 263-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բանդիվան բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 08-024-0020-0001 կադաստրային ծածկագրով 0,020683 հեկտար, 08-024-0020-0005 կադաստրային ծածկագրով 0,099020 հեկտար մակերեսով այլ գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» թիվ 263-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետում գրված «2-րդ փողոց 2/1» թվերն ու տառերը փոխարինել «2-րդ փողոց 2/4» թվերով ու տառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

«05» սեպտեմբերի 2025 թվականի
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2025թվականի N 291-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետերի դրույթներով.

ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղակայված համայնքային սեփականություն հանդիսացող 08-010-0048-0015,0016,0018 կադաստրային ծածկագրերից 0.05522 հեկտար մակերեսով անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր, 26-րդ փողոց, 48/1 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

«09» սեպտեմբերի 2025 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2025թվականի N 292-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴԱՐԵՋԱՆ ՎԱՂԻՆԱԿԻ ՊՈԴՈՍՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՊՈԴՈՍՅԱՆԻ, ԿԱՐԱՊԵՏ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՊՈԴՈՍՅԱՆԻ, ՇԱՀԵՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՊՈԴՈՍՅԱՆԻ, ՎԱՐԴՈՒՀԻ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՊՈԴՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,114 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականիմայիսի 18–ի թիվ 912-Նորոշմամբհաստատվածկարգի 2-րդ, 8-րդ, 11-րդ,կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2–րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում գտնվող Դարեջան Վաղինակի Պոդոսյանի, Հովհաննես Արշալույսի Պոդոսյանի, Կարապետ Արշալույսի Պոդոսյանի, Շահեն Արշալույսի Պոդոսյանի, Վարդուհի Արշալույսի Պոդոսյանի սեփականության իրավունքով պատկանող/հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 12122018-08-0018/ 08-035-0022-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,114 հեկտար հողամասում /հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Գտաշեն , 5-րդ փողոց, 3 բնակելի տուն/ ինքնակամ կառուցված ավտոտնակը, օժանդակ շինությունը , ծածկը, ինքնակամ բացված 1 դուռը և 4 պատուհանը, բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականիմայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված օրինականացման պայմաններին, շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգչ ի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում

կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ինքնակամ կառույցը հաշվառված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024SAN85D ծածկագրով , հիմք ընդունելով ԴարեջանՎաղինակի Պողասյանի դիմումը

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Գտաշեն բնակավայրում գտնվող, Դարեջան Վաղինակի Պողոսյանին, Հովհաննես Արշալույսի Պողոսյանին, Կարապետ Արշալույսի Պողոսյանին, Շահեն Արշալույսի Պողոսյանին, Վարդուհի Արշալույսի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական ՝ 12122018-08-0018/ 08-035-0022-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,114 հեկտար հողամասում /հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Գտաշեն, 5-րդ փողոց, 3 բնակելի տուն/ ինքնակամ կառուցված 72,84 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, օժանդակ շինությունը, ծածկը և ինքնակամ բացված 1 դուռն ու 4 պատուհանը ճանաչել օրինական և դրանք համարել քաղաքացիների սեփականությունը:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բյուջե պետք է վճարի 72,84 քառակուսի մետ շինությունների համար 23430(քսաներեք հազար չորս հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ և յուրաքանչյուր ինքնակամ բացված դռան ու պատուհանի համար 5000 /հինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ/ ընդհանուր 48430 /քառասուն հազար չորս հազար երեսուն/ օրինականացման վճար:

3.Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

«11» սեպտեմբերի 2025 թվական
գյուղ Ամասիա